ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1

«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման լիցենզավորման հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 22-ին կայացած նիստի

22.08.2014թ.

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և «ԱՐ-ԲԵ» ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ի 2014 թվականի օգոստոսի 12-ի դիմումը՝ **Հանձնաժողովը եզրակացրեց.**

«ԱՐ-ԲԵ» ՀԱՅ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՏՈՒՆ» ՍՊԸ-ին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2012 օգոստոսի 24-ի թիվ 711-Ա հրամանով տրված «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման N ՕՆ 12 լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման:

Հանձնաժողովը հրապարակեց իր եզրակացությունը:

Արձանագրությունը կազմվել է մեկ բնօրինակից՝ 22.08.2014թ.

Հանձնաժողովի նախագահ Գարեգին Մելքոնյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար Լուսինե Նազարյան